



Ա Ր Ա Ր Ա Տ

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԹՅԻԵ Լ. ՏԱՐԻ

ՀԱՄԵՐ ԵՕԹՆԵՐՈՐԳ

ՅՈՒԼԻՍ 1897 Թ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԻՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ.



Ս. Էջմիածնի մասանց խորանում՝ մի նշանաւոր հնութիւն կայ: Այդ է Ամենափրկիչ կոչուած ս. պատկերը: Մայր Աթոռի միաբանութիւնը բարոյական պարտիք ունի նորա լուսանկարը հանդէս բերելու, որպէսզի հնազետներն աւելի մօտիկ ծանօթանան նորա որպիսութեանը: Առ այժմ՝ այդ պատկերի մասին հարեանցի զաղափար տալու համար ստիպուած ենք շատանալ հետեւեալ համառօտ նկարագրութեամբ: * Պատկերը քանդակուած

է անփուտ փայտի վերայ, ունի երեք թիզ եւ չորս մատ երկարութիւն եւ մէկ թիզ եռթը մատ լայնութիւն: Բառակուսի հարթերես տախտակի վերայ բարձրաքանդակ փորուած է Յիսուսի խաչից իջեցնելու պատկերը. աջ կողմից մի մարդ Փրկչի քազուկը խաչից ազատելով ստել է իւր ուսին եւ պահում է նորա մարմինը. ձախ կողմից մի այլ մարդ արցանով քաշում է բեւեռը. խաչի զլխին երեւում է հայրական Աջը եւ աղանակերպ Հոգին:

Այս թանկագին հնութիւնը սերուած է Հայաստան Է. դարում: Թերեւս պատահմամբ ազատուել է նա ամենաձախ ժամանակի ժա-

* Հասկաթ. Յ. եպ. Ստորագրութիւն Ա. 48.

նիքներն ից եւ պահուել է մեր նուիրական սրբ-
բաւկայրում: որ արդի սերունդին պատմէ ան-
ցած զնացած օրերի կրօնական ջերմոտան-
դութեան մասին: որ այժմ՝ աւանդ: փախել
է մեզանից:

Ա.

Պատմի աւանդութիւններից յայտնի է,
որ Հայոց եկեղեցին ունեցել է աւելի հին և
նշանաւոր պատկերներ: ինչպէս են Փրկչի ս.
դաստառակը, որ շնորհուեցաւ նախահաւատ
Արգար արքային և Տիրամօր պատկերը, որ
ս. Առաքեալն Բարթողղիմէոս իւր հետ Հայաս-
տան բերեց և հաստատեց Հոգեաց վանքում:

Ս. դաստառակի մասին Մովսէս Խորե-
նացին յիշում է, որ Արգարի սուրհանգակն
Անան մեր Տիրոջ պատասխանի հետ միասին
բերեց «եւ զվննդանազրութիւն Փրկչական
պատկերին» որ կայ: ասում է: յԾղեսացոց
քաղաքին մինչեւ ցայսօր ժամանակի»: Իսկ
ս. Հռիփսիմեանց պատմութիւնն անելիս յի-
շում է: որ նոքա «եկին յԵղեսիա քաղաք,
և երկրպագեալք փրկչական պատկերին, և
լցան խնդութեամբ: համարեցան տեսեալ զԲանն
մարմին եղեալ:»¹

Բանի որ Խորենացին ինքն անձամբ ե-
ղել է Եղեսիայում և «Թեթեակի նաւել է
նորա զիւանի խորքերում»,² պէտք էր սպա-
սել, որ նա ճշգրիտ տեղեկութիւններ տար
ս. պատկերի որպիսութեան մասին. սակայն,
երևի, նա անձամբ տեսած չէ ս. դաստառակն,
և ինչ որ պատմում է: քաղել է մի ուրիշ
աղբիւրից, թերևս ս. Եփրեմի կտակ³ ասուած
անվաւեր յիշատակարանից: Իսկպէս յայտնի
չէ: թէ ս. դաստառակն Ե. դարում կարճ էր
մատչելի լինել մեր պատմահօրը: Աւանդու-
թիւն⁴ կայ: որ Արգար արքայի մահից յե-
տոյ երբ հեթանոսութիւնը նորից թագա-
ւորել սկսեց, Ադդէ եպիսկոպոսն աճապարեց
աղիւսով փակելու ս. պատկերի առաջը, որով

և ծածկուեցաւ նա հեթանոսների աչքից:
Եթէ այս աւանդութեանն հետեւելու լինինք,
պէտք է մտածենք, որ ոչ ս. Հռիփսիմեանք,
ոչ ս. Եփրեմ և ոչ այլ ոք նոցանից յառաջ
կամ յետոյ չէին կարող տեսնել ս. պատկե-
րը:

Մ. Խորենացու խօսքերը գրէթէ նոյնու-
թեամբ կրկնում են Յովհաննէս կաթուղիկոս
Ուխտանէս եպիսկոպոս և Ստեփաննոս Աստ-
ղիկի վերջինս այն տարրերութեամբ, որ յի-
շում է ս. պատկերի փոխադրութիւնն Եղե-
սիայից Բիւզանդիա:

Հնագոյն և արժանահաւատ տեղեկու-
թիւնը ս. դաստառակի մասին աւանդում է
Արգարի քարտուղարը Լարուբնիա Եղեսացին.
նա ասում է, որ Անան «առեալ նկարեաց
զպատկերն Յիսուսի ընտիր զեղօր: քանզի
արուեստաւոր թագաւորին էր»: Արգար ար-
քայն այդ պատկերն ընդունեց «մեծաւ ուրա-
խութեամբ և եղ զնա պատուով ի սենեկի
իւրում յապարանս իւր:»¹ Թէ ինչ վախճան
ունեցաւ ս. պատկերն անմիջապէս Արգարի
մահից յետոյ, հաւաստի ոչինչ յայտնի չէ:
Աւանդութիւնն ասում է, որ նա զրուած էր
Եղեսիայի զրան ճակատին: Ադդէ եպիսկոպո-
սը նորա առջև մի կանթեղ վառեց և աղիւ-
սով ամուր փակեց առաջը: Այդ վիճակի մէջ
մնաց նա մինչև 539 թուականը. և յայտ-
նուեցաւ: երբ Պարսիկները պաշարել էին քա-
ղաքը. նոքա ծանր պաշարումն ստիպուեցան
վերցնել և հեռանալ այն ժամանակ, երբ Ե-
ղեսիայի եպիսկոպոսն հրաշքով դուռ ծած-
կուած ս. պատկերն և նորա զօրութեամբ
հալածեց թշնամիներին:² Բրիտանիկութեան
նշանաւոր յաղթանակներից մէկն էր այդ, որ
երևի պատճառ եղաւ նորանոր աւանդու-
թիւնների ս. դաստառակի անուշով: Հաւա-
նական է, որ այդ ժամանակից և տարածուե-
ցաւ նորա հռչակը քրիստոնէականների մէջ, թէ
և դարձեալ մեզ անձանօթ են մնում նորան
վերարերեալ շատ հանգամանքներ, ինչպէս օրի-
նակ տեղը, չափը, յարգութիւն ընծայելու
ճէսերն և այլն:

1. Մովս. Խոր. Մատենազրութիւնք. եր. 106
և 299.
2. Մ. Խոր. Պատմութիւն, Գ. 62.
3. 2ամչեան. Պատմ. Ա. 579.
4. 2ամչ. Պատմ. Բ. 288.

1. Դերուբնա Եղեսացի, (Երուսաղեմ) եր.
5, 6.
2. 2ամչ. Պատմ. Բ. 244.

Աւանդութիւններէ մէջ ամենից աւելի ուշադրութեան արժանին այն է, որ նոցա յիշած ս. պատկերն այլ ևս ամենեւին կապ չունի Արգար արքայի «արուեստաւորի ընտիր դեղերով նկարած» փրկչական կենդանազրի հետ, այլ խօսուում է այնպիսի մի պատկերի մասին, որ անձեռագործ է: Ինչպէս Յայսմաւուրքից ¹ երևում է, մեր եկեղեցին իւրաքանչիւր տարի Սաւասարդի 6-ին (օգոստոսի 16-ին) կատարում է եղիլ առանձին «յիշատակ ս. դաստառակին Բրիստոսի»: անշուշտ իւրաքանչիւր տարի Սաւասարդի 6-ին, ինչպէս սովորութիւն էր, հաւատացելոց ունկնդրութեան համար կարգացուում էր ս. դաստառակի պատմութիւնը: այդ յիշատակարանում այսպէս է նկարագրուած ս. պատկերի յօրինումը:

Անան հաւաստի լինելով, որ Փրկչի ընդունելու չէ Արգարի հրաւերն Եղեօֆա զնալու, սկսեց նկարել նորա պատկերը: Վրբե սկսաւ ծրագրել, ասում է, զերիտասարդական նասալն, որպէս և էրն, և յորժամ դարձեալ հայեցաւ ի նա, ետես զնա ծեր, և ջնջեալ դռնաջինն, սկսաւ զայն ձեւացուցանել: յորժամ դարձեալ հայեցաւ ի նա, ետես զնա պատանի երկուտասանամեայ, յայնժամ ապա դարհուրեալ, եթող զնկարելն: Փրկչի կերպարանափոխ լինելու այս աւանդութիւնը ոչ հակառակ է ս. աւետարանին և ոչ էլ միակն է հին յիշատակարաններէ մէջ: Յայտնի է, որ ս. աւետարանիչներն երեքն էլ անխափր և միանման են պատմում Յիսուսի պայծառակերպութիւնը: Եւ այլակերպեալ առաջի նոցա. Եւ յայլակերպս եղև առաջի նոցա. Եւ եղև տեսիլ երեսաց նորա այլակերպս այսպէս են վկայում ս. աւետարանիչները: ² Մենք գիտենք նմանապէս, որ Յայսմաւուրքի մէջ Բաղոց ամսի 29-ին (յունուարի 6-ին), պատմելով մոզերի դալուստն և երկրպագութիւնն, յիշուում է այն, որ երբ երեք մոզերն առանձին առանձին էին մտնում Յիսուս մանուկին տեսնում էին զանազան կերպարանք-

ներով: ¹ Նոյն այդ աւանդութիւնը դանում ենք և Աւետարանից ² մէկի մէջ, որ տեղ մոզերի երկրպագութեան մասին երգուած է այսպէս.

Թէ ծեր մտաւ ի տեսութիւն, աւետիս,
Նա ծեր տեսաւ իւր նմանի, ա՛.
Թէ տղայ մտաւ ի տեսութիւն, ա՛.
Նա տղայ տեսաւ ի ը նմանի, ա՛.
Երեքն միարան մտին, ա՛.
Տղայ տեսին ի գիծկ Կուսին, ա՛:

Նոյն աւանդութիւնները տեսնում ենք և ժողովրդական զրոյցների մէջ. ³ Մեկքոն թագաւոր կինաց տխութին, նորամանուկ Գեասպար թագաւոր կինաց տխութին, երիտասարդ, Բաղասար թագաւոր կինաց տխութին, ծրոնուկ խալվիւր տեսաւ, ... Վրեքն էլ կնացին տեսան նորամանուկ:

Իսկ հին ժողովրդական երգերի ⁴ մէջ Յիսուս պատկերացած է իբրև ծերունի.

Մեր Տէրն շէր -- աւււր,
Փառօք ըազմեալ Տէրն ի խաչին,
Քաղցր ձայնէ նաւափարաց.
Ա՛յ նաւախնը, դուք իմ եղբարը,
Եղբարը, առէք զայն շէր ի նաւն,
Ես ձեզ ըազում աղօթս առնեմ:
Ա՛յ, զնա՛, զնա՛, շէր -- աւււր,
Մեր նաւս չէ վասն աղօթից: ...»

Այս աւանդութիւններն ուսուցանում են մեզ, որ Փրկչի կերպարանքն իսկապէս մարդկային արուեստի համար անբմբունելի էր և անպարագրելի, ուրեմն և զուր էր մտածել, թէ կարող է այնպիսի մի ձեռագործ նկար լինել, որն Աստուածորդու դէմքի մարդկային արտայայտութեան մէջ երեւցնէր և աստուածային կերպարանքը: Այս իսկ անհնարին և դերմարդկային հանդամանքն եղաւ պատճառ, որ ս. դաստառակի յօրինումն այլ ևս արքա-

1. 2եռագիր Յայսմաւուրք (մեր սեփական) Նաւասարդի 6.
2. Մատթ. Ժ: 1, Մարկ. Թ. 1, Դուկ. Թ. 29,

1. Նոր ժողովածու, Ա. Պրակ. 24.
2. Նոյն եր. 10.
3. Փշրանքներ ժող. բանահ. Թիֆլիս 1892, եր. 33.
4. Նոր ժողովածու, Ա. 27.
Ջաւախքի բուրմունք, Թիֆլիս, 1892, եր. 17.

յական «արուեստաւորի» գործ չէր համարուում: այլ Փրկչի իրեն հրաշքներից մէկը: Այսպէս է պատմում մեզ և յիշեալ աւանդութիւնը. Յիսուս, նկատելով Անանի տաղնապը և զթաւով նորա վերայ, ինքն հրաշքով յօրինեց իւր պատկերը՝ դնելով դաստառակն իւր սուրբ երեսի վերայ.¹ «առեալ, ասում է, դաստառակ մի սպիտակ վուշ իջրել գրկաշափ մի, եզերքն ոսկեթել և ծիրանի արքունական, արկ դաստուածային երեսօքն, և իսկոյն նկարեցաւ ի նմա պատկերն տէրունական՝ աչքն եւ յոյնքն՝ քիթն եւ ընդամեն, դիրք երեսացն եւ սորուն, գոյնն եւ կերպն ամենեւին անպակաս»: Այս իսկ անձեռագործ պատկերն, երեսի աչքի առջ ունի Թովմայ Արծրունին, որ Արգարի և Փրկչի յարարութեան մասին խօսելու ժամանակ յիշում² է, որ «գամձկալից տեսութիւնն հրաշափառապէս եւ անձառարար ի վարչամակի տպաւորեալ ելից զկարօտութիւնն Արգարու աղբիւրն կենաց Զրիստոս: Թովմայի այս խօսքերից երևում է, որ Ժ. դարի սկզբներում արդէն Հայոց մէջ գոյութիւն ունէր ս. դաստառակի անձեռագործ լինելու աւանդութիւնը. բացի Թովմայից բոլոր միւս պատմիչները յիշում են միայն Փրկչի «կենդանագրութիւնը», նոցանից ոչ մէկը, որքան զիտեմք, չունի յիշատակութիւն ս. դաստառակի յօրինման մասին այն իմաստով ինչ որ յայտնի է Թովմայի և Յայսմաւուրքի խօսքերից:³ Կարծում ենք, որ այդ անձեռագործ պատկերի աւանդութիւնը կազմուել է այն ժամանակ, երբ քրիստոնէականների մէջ գոյութիւն ունէր պատկերների յարգութիւն ընծայելու վէճը և փոխադարձ մաքառումը: Այդ էր Ը. և Թ. դարերում: Պատկերամարտները բացարձակապէս մերժում էին ս. պատկերներին յարգութիւն մատուցանելու ձէւն այն համոզմունքով, թէ՛ նոքա իբրև մարդկային ձեռակերտ նոյնն են ինչ որ հեթանոսական զրօշեալները, և թէ՛ նոցա յար-

գանք ընծայել կրնանակէր վերադառնալ դէպի հեթանոսութիւն: Հակառակութեան ժամանակ պատկերասերներն այլ կերպ չէին կարող պաշտպանել իրենց զաղափարն, եթէ հանդէս չբերէին ժամանակի ոգուն համեմատ փաստեր և վկայութիւններ նախ թէ փրկչական պատկերի հեղինակն ինքը Փրկիչն է, երկրորդ թէ ս. պատկերներն յօրինուած են գերմարդկային զօրութեամբ և երրորդ թէ պատկերների յարգութիւն ընծայելու աւանդութիւնը մնացած է նոյն իսկ ս. առաքեալներից և նուիրագործուած է վերին անսոյութեամբ: Այս է պատճառը, որ Եղեսիոյ դաստառակը, որ թերևս քրիստոնէական բոլոր պատկերների մէջ ամենից հինն է, նոր աւանդութեան մէջ հանդիսանում է ոչ իբրև արքայական «արուեստաւորի» գործ, այլ իբրև «հրաշափառապէս և անձառարար ի վարչամակի տպաւորեալ» անձեռագործ նմանութիւն Փրկչի: Հաւանական է, որ ս. դաստառակի այսպիսի հաշակն և յիշատակութիւնը տարածուած լինի քրիստոնէականների մէջ զլիաւորապէս Բիւզանդիոյ ազդեցութեամբ: Այդ երևում է նախ այն բանից, որ մինչև Ժ. դարը Հայոց մէջ զրէթէ մոռացուած էր այն: Պատմիչները միանման կրկնում են նոյն Մ. Դարեանացու խօսքերը, և եթէ մի բան աւելացնում են, դարձեալ չեն յիշում անձեռագործ լինելու մասին: Եւ երկրորդ, որ երբ 944 թուին ս. դաստառակը փոխադրուեցաւ Եղեսիայից Բիւզանդիա,* այնուհետև տարեկան տօն սահմանուեցաւ օգոստոսի 16-ին, որ յայտնի չէ՝ ինչ ճանապարհով մտել էր և Հայոց մէջ, ինչպէս այդ երևում է Յայսմաւուրքից: Եւ զարմանալին այն է, որ հէնց այն ժամանակի երբ Հայերը բացարձակ հակառակեցան Վահան կաթողիկոսին և նրա բերել տուած յունական պատկերների պատճառով նորան դատի մասնեցին և դատապարտեցին,¹ նոյն այն տարիներում եղաւ ս. դաս-

1. Նոյն Յայսմաւուրք.
 2. Թովմայ Արծր. Պատմ. եր. 46 (Ս. Պրբգ).
 3. Թէև Մ. Դարեանացու Աշխարհադրութեան մէջ (եր. 711) ասուած է, Վառհաւ ուր ամենագործ պատկերն է Փրկչին սակայն այս կարող է լինել յետին ժամանակների յաւելուած:

* Ստ. Ասողկե եր. 45. (Ս. Պրբգ).
 Սամուէլ Անեցի եր. 100.
 Վարդան եր. 34.
 Միթթ. Այրիվ. եր. 44.
 1. Սամուէլ Անեցի եր. 101.
 Ստեփ. Օրպէլ. զԼ. ԾԲ.

տառակի փոխադրութիւնը Բիւզանդիա և նորա անունով տօներ, հանդէսներ սահմանելը մինչդեռ ոչ մի հետք չի երևում Հայոց մէջ այդ ամենի համար: Այս ցոյց է տալիս որ ս. դաստառակն այնպէս ինչպէս ընդունում էին նորան Հռոմէները և ինչպէս նոյն իսկ Ժ. դարի վերջերում նկարագրել են բիւզանդական յիշատակարանները: Հայերին ծանօթ չէ եղել, և նոցա մէջ առանձին ժողովրդականութիւն չէ ունեցել: 944 թուին Բիւզանդիոյ Ռոմանոս Բ. կայսրը¹ Եդեսիոյ արաբական Սուլէյման իշխանից գնեց ս. դաստառակը, վճարելով տասներկու հազար արծաթ դահեկան և վերագարձելով երեք հարիւր գերի: Թէ փոխադրութիւնն Եդեսիայից Բիւզանդիա թէ մուտքը բիւզանդական մայրաքաղաքի քրիստոնեայ ժողովրդի մէջ, և թէ տօներն ու հանդէսները որ տեղի ունեցան ծանապարհին և այնտեղ, պարզաբուժ են բաղմամբ և կրօնական զրոյցներով և հրաշալի աւանդութիւններով, որոնք բիւզանդական կեդրոնից² գրով և խօսքով տարածուում էին ամեն կողմ և զրգում էին քրիստոնեաների բարեպաշտական զգացմունքներն և հետաքրքրութիւնը: Այդպիսի շրջանի ծնունդ է, անշուշտ, և Հայոց Յայսմաուրբի յիշատակարանը ս. դաստառակի վերայ թերևս յօրինուած կամ թարգմանուած ԺԱ. դարում Գրիգոր Բ. վկայասերի ձեռքով:

Ս. դաստառակը բիւզանդական մայրաքաղաքից փոխադրուեցաւ Իտալիոյ Ճենովա քաղաքը ԺԴ. դարում իրրև պարգև Բիւզանդիոյ կայսեր կողմից նոյն քաղաքի ղուքս Լեոնարդոյ Մոնապոլդոյին, որ 1384 թուին նոյնը կտակով աւանդեց Ճենովայի ս. Բարթոլոմէոս առաքելոյ վանքին. այն ժամանակ այդ վանքը հայ կրօնաւորների մենաստան էր:³ Ըստ աւանդութեան, նոյն պատկերն է, որ մինչև օրս պահուում է Ճենովայի ս. Բարթոլոմէոսի վանքում. չորս երկաթէ դռներ ունի

ս. դաստառակի մարմարինեայ պահարանը, որ փակուում է տասն և մէկ բանալիներով. նոցանից իննը պահուում է Ճենովայի պատուաւոր քաղաքացիների մօտ, մէկը նոյն քաղաքի խորհրդարանում, և մէկն էլ վանքում: Տարին մի անգամ Հոգեգալուստի տօնին հանդէս է դրուում ս. դաստառակը ժողովրդի և ուխտաւորների երկրպագութեան համար: Իւրաքանչիւր անգամին ներկայ են լինում քաղաքային պատգամաւորներ և պաշտօնական անձինք, որոնք և կազմում են արձանագրութիւն պահարանի բացման և հոգևոր հանդէսների համար:

Թէ Ճենովայի դաստառակն է քրիստոնեական եկեղեցու ամենահին ս. պատկերը, թէպէտև մի «արուեստաւորի» նկարած, յանձն չենք առնում պնդել և հաստատել: Սակայն տարակոյս չկայ, որ հնագոյն պատմական տեղեկութիւններով պարզուած պիտի համարուի այն, թէ մեր Փրկիչը ոչ ոքի շնորհած չէ Իւր իսկ յօրինած պատկերը. Սա, որ պարզեց մեզ Իւր փրկարար մարմինն և արիւնը, ձանաչեց մեզ իրրև Իւր պատկեր, իրրև պատկեր Աստուծոյ, անկարօտ է որ և է «հրաշափառապէս և անձառարար տպաւորեալ» կենդանագրի: Այդ ձանաչելով, բարեպաշտ քրիստոնեաներն ունեցած են և ունին բարի ցանկութիւն՝ իրենց հասողութեանը մատչելի մի նմանութիւն գտնել Անմահին, և իրենց փափազը յազեցնել նաև աչքի տեսութեամբ Անտեսանելոյն: Այդ զովելի բարեպաշտութեան սահմանի մէջ մնալով, գեղարուեստը կարող է տալ մեզ շատ և շատ ընտիր նկարներ, որոնք և նուիրագործում է ս. եկեղեցին օրհնութեան և օժման միջոցով. բայց մեզք է նայել նոցա վերայ իրրև Արարչի ստեղծագործութեան վերայ, զի նա միայն մի պատկեր է ստեղծել, այդ է բանական մարգը:

Բ.

Տիրամօր պատկերի մասին մինչ ցայս ծանօթ աղբիւրներից այս է յայտնի: Յայսմաուրբի մէջ նաւասարդի 10-ին (օգոստոսի 20-ին) նշանակուած է «յիշատակ ս. պատկեր»

1. 2ամջ. Բ. 832 ևլն.
 2. Lebau, Hist. d. bas. Empire, 14. եր. 4.
 3. 2ամջ. Պատմ. Բ. 833.
 4. Rec. d. hist. d. Croizades, եր. 227. ծան. 4. Ասողիկ եր. 333. (Ս. Պրբգ.) Ս. Դաստառակ, վ. Էննա 1859.

րի Աստուածածնի»։ Թէ երբ և ի՞նչպէս է սահմանուած այդ յիշատակը՝ դժուար է իմանալ։ յայտնի է այն որ Ե. զարուժ Սահակ Արծրունին մի թղթով դիմում է Մովսէս Խորենացուն և ուզում է նորանից իմանալ Տիրամօր պատկերի պատմութիւնը. «չամիմք ուսանիլ ի քէն զսրանշնլագործութիւն պատկերին»։ որ յանուն Տիրամօրն կայ ի Հոգեաց վանս»։ եթէ ուստի՞ կամ յուժմէ՞ բերաւ յայն տեղի»։ այս հարցմունքը Սահակ տալիս է այն պատճառով որ այն պատկերի մասին հակասական տեղեկութիւններ են եղել այն ժամանակ. «բազում ինչ այլք այլապէս պատմեն իրս ոչ նման միմեանց» և ոչ հաւատացաք ումք»։ ասում է։ զստոյցն գիտեր»։ Արծրունեաց իշխանի այս խօսքերը ցոյց են տալիս որ Ե. զարուժ արդէն կար Հոգեաց վանքում Տիրամօր անունով մի այնպիսի պատկեր, որի մասին ուրիշները զանազան կերպ են պատմում եղել Հոգեաց վանքը Անձեացեաց երկրումն է, որ Վասպուրականի մի մասն է Արծրունեաց տոհմի կալուածների մէջ։ Այս պատճառով բնական է Սահակ Արծրունու հետաքրքրութիւնը որ և պատճառ եղաւ այդպէս կանոն զրով դրոշմել տալու մի յիշատակարան ս. պատկերի մասին։ Մովսէս Խորենացին և Յայսմաուրքը միարան են գրէթէ իրենց ունեցած տեղեկութիւններով՝ շատ քիչ տարբերութեամբ. Յայսմաուրքի մէջ ասուած է, թէ ս. Յովհաննէս աւետարանիչը Տիրամօր փոխման օրն «կօփեաց տախտակ մի կիպարի» և ս. առաքելաների հետ միասին տարան Աստուածածնի մօտ խնդրեցին թէ «ան զտախտակս զայս և դիր երեսաց քոց, որ նկատի պատկեր քո և տուր նշան բժշկութեան ակտացելոց»։ ս. կոյսը նոցա խնդրուածքը կատարելու համար առաւ տախտակը, զրեց երեսին և թաց արաւ սրտասուքով, աղաչեց առ Աստուած «աննել բժշկութիւն ամենայն ցաւոց մանաւանդ բորոտաց և պիտակոտաց»։ Աստուածորդին «որ կայր հրեղէն կառօք հանդէպ Սրբուհւոյն աստուածային աջովն տեսնողրեաց» օրհնեաց զնկարեալ պատկեր Մօր իւրոյ»։

Այսպէս յօրինուեցաւ Տիրամօր պատկերը որ Խորենացու ասելով ս. Յովհաննէս աւե-

տարանչի ձեռաց գործն է՝ սրբուած Աստուածամօր արտասուքով և օրհնութեամբ. «յայտնեալ աւետարանչին, ասում է, զփայտն կիպարիս, յորմէ կենսարեր խաշն, կերպածնէ զպատկեր Տիրամօրն»։ ս. առաքելաները մատուցանելով տախտակը ս. կուսին ասում են. «ընկալ զփայտեղէն պատկերս զայս զնկարեալս ի Յովհաննէ»։ «առեալ ամենօրհնեալ Սրբուհւոյն, ասած է մի այլ տեղ, զպատկերն նրկարեալ ի սուրբ ձեռս իւր...»¹ ս. Աստուածածնի փոխուովց յետոյ, երբ Բարթուղիմէոս առաքելալը, որ բացակայ էր, եկաւ և սկսեց սգալ, երկնքից ձայն լսուեցաւ.² Թէ «տուք զպատկեր Տիրամօրն ի Բարթուղիմէոս, զի դովաւ մտիթարեացի և տարցէ ի վիճակ իւր»։ «ետուն նմա, ասում է Խորենացին»³ զպատկեր Տիրամօրն, որ էր փայտն նկարեալ»։ Ս. Հռիփսիմեանց պատմութեան մէջ էլ Ս. Խորենացին յիշատակում է այդ պատկերի մասին, երբ պատմում է, որ կոյսերը ս. Աստուածածնի գերեզմանին ուխտ անելու ժամանակ տեսիլքով պատուէր ստացան զնալ Հայաստան «ի բաժին Թադէոսի առաքելոյն»։ Եւ զպատկերն փայտեղէն, որ եղեալ է յերեսս իմ յաւուր փոխման իմոյ խնդրեալիք» պատուիրում էր Տիրամայրը.⁴

Ս. առաքելն Բարթուղիմէոս իւր քարոզութեան ժամանակ հետը շրջեցնում էր ս. պատկերն, և երբ հասաւ Անձեացեաց դաւառը, կործանեց այնտեղ Անահայ կուռքը, որ գտնուում էր Դարբնաց Բար ասուած տեղում Տիգրիսի վերայ, և կանգնեց Բրիտանի խաչը, այն ժամանակ հաստատեց այնտեղ «սուրբ կանանց» մի վանք Տիրամօր անունով, ու ամփոփեց նորա մէջ ս. պատկերը։ Այդ էր Հոգեաց վանքը.⁵ Յայսմաուրքն իւր յիշատակագրութիւնն այսպէս է վերջացնում. «և անդ կայ ամփոփեալ կենդանաղիր պատկեր Աստուածամօրն ի պահպանութիւն աշխարհիս և պարծանք ազգիս Հայոց»։ Ս. պատկե-

1. Մովս. Խոր. Մատենագր. եր. 290, 291 և 292.
 2. Յայսմաուրք (ձեռ.) մեր սեփական.
 3. Մ. Խոր. Մատ. եր. 294.
 4. Նոյն եր. 299.
 5. Նոյն եր. 295.

րի Հոգեաց վանքում պահպանուելու մասին հատուկուոր անդեկուլթիւններ կան յետին ժամանակների յիշատակարաններում այսպէս՝ մի յիշատակարան,¹ որ Ը. զարի է համարուում (Թէ և կասկածելի) նշանակում է Տիրամօր պատկերն Հոգոց վանքում: Վարդանի անունով մնացած աշխարհադուլթեան մէջ յիշուած է «Հոգոց վանքն» ուր կայ կենդանագիր պատկերն Տիրամայր Աստուածածնին, զոր երբ սուրբ առաքեալն Բարդուղիմէոս:² Այսպիսի ցուցումներից երևում է, որ ս. պատկերի անունը կար Հայոց մէջ շարունակարար մինչև վերջին դարերս: Թերևս նոյն պատկերն աչքի առաջ ունի երգիչն և նոյն նորա յիշատակն է պահուած մեր շարականների մէջ, որ մինչև օրս երգուում է.

«Զկենդանագիր անարատ ծնողի քո

Արկանեմք առաջ անտխակալ տէրութեանդ քո.
և այլն:

Ըստ աւանդութեան սորա երգիչը Սահակ Գ. Զորավորեցին է. եթէ այսպէս լինի այն ժամանակ մեզ համար մի հաւատարմ վրկայութիւն կայ, որ Ը. դարում Տիրամօր պատկերի պաշտամունքը տարածուած և ընդհանրացած էր արդէն Հայոց մէջ, որովհետև շարականն աչքի առաջ ունի ս. Աստուածածնի կենդանագիրը: Այդ խնդիրն աւելի կը պարզուի և մեզ համար միանգամայն հասկանալի կը լինի, եթէ կարելի լինէր հաւատարմ գիտնալ, թէ Մայր Մաշտոցի մէջ ընդունուած և գործածական արարողութիւնը պատկեր օրհնելու մասին երբ է կազմուել և հաստատուել և ո՞ւմ ձևաքով. այնտեղ կայ «կանոն օրհնութեան նկարեալ եկեղեցւոյ և ամենայն սուրբ պատկերաց»: Այն ինչ փրկչական պատկերի օրհնութեան խնդրուածքների մէջ յիշատակութիւն չկայ ոչ ս. դաստառակի և ոչ որ և է այլ հին փրկչական պատկերի մասին, Աստուածածնի պատկերի օրհնութեան մէջ յիշուում է այն, ինչ որ արդէն գիտենք Հոգեաց վանքում ամփոփուած ս. պատկերի մասին. «առաքեալ զչնորհս ամենա-

սուրբ Հոգւոյդ, ասում է եպիսկոպոսը վերջին աղօթքի մէջ, ի նիւթեղէն յայս տպաւորեալ պատկերս . . . և տպաւորեալ ի սմա զներգործութիւն շնորհաց այնմ հրաշագործ պատկերին երջանիկ Մօր քո եւ Կուսի՝ զոր եղ ի վերայ ամենամարտը երեսաց իւրոց յաւուր հրաժարման իւրոյ եւ ետ սրոց առաքելոց»: ¹ Արդէն այսքանն էլ բաւական է մեզ իմանալու համար, թէ մեր եկեղեցին Տիրամօր պատկերի յարգութեան ճէսը հիմնել է հին առաքելական աւանդութեան վերայ և նուիրագործել է կիրարկութիւնն այնպիսի պատկերների, որոնք Հոգեաց վանքի պատկերի ընդօրինակութիւն են կամ նմանութիւն: Այս պատճառով շատ կարևոր է ձշղել թէ ի՞նչ առանձնութիւն ունի այն պատկերը, սակայն առայժմ այդ անհնարին է, քանի որ, ինչքան զիտենք, այդ պատկերի նկարագրութիւնը ոչ մի տեղ չկայ: Մեր հին մատենագրներից միայն ս. Գրիգոր Նարեկացին մի ակնարկով հասկայնում է, որ Տիրամօր պատկեր եղել է. նա իւր ներբողի մէջ որ նուիրել է ս. Աստուածածնին (եր. 420). ասում է «ձունը կրկնեսցի արժանապատիւ քումը պատկերի»: առանց յիշելու նորա որպիսութիւնը: *

Մի այլ անգամի թողնելով պարզելու թէ Հայոց աւանդութեամբ ի՞նչպիսի պատկեր պէտք է ունենար Տիրամայր ս. Կոյսը կարևոր ենք համարում մէջ բերել հետեւեալ հարցերը.

Նախ կարծելով, որ Հոգեաց վանքի պատկերը պարզապէս Տիրամօրն էր ներկայացնում առանց Յիսուս Մանկան՝ հետաքրքիր է իմանալ՝ ո՞ւր և ո՞ր ժամանակից զոյգութիւն ունին Հայոց վանքերում և եկեղեցիներում հինց

1. Մայր Մաշտոց Կ. Պօլիս, 1807 թ.

* ՄԱՆՍՐՈՒԹԻՒՆ. Այժմ Հայոց մէջ Տիրամօր անունով զանազան հին պատկերներ կան, որոնք ի հարկէ իրարուց շատ տարբեր են. յայտնի է Աղէքսանդրապոլի Եօթն Ախրաց ս. պատկերը, որ ըստ աւանդութեան Առկաս աւետարանչի նկարածն է. իբրև հին յիշուում է նաև Աւանայ վանքի Տիրամօր պատկերը: Բայց շատ հաւանական է, որ եթէ Հայոց մէջ արգարև կայն հնագոյն նուիրական պատկերների, այդպիսիները գաղթականութեան միջոցով հեռու երկրներ տարուած և օտարների ձեռք անցած լինին. այդպիսի մի օրինակ է Կամենեցի պատկերը (տես Սխական 88, Կամենեց 40):

1. Թորոս Աղբար, Ա. 296.
2. Բառգիրք երեմիայ վարդապետի, 1712 թ. եր. 514.

այդպիսի պատկերներ և ի՞նչպիսի զճաղրու-
թիւն ունին նոքա. և երկրորդ աչքի առաջ
ունենալով, որ ս. Աստուածածնի անուանը
նուիրուած բազմաթիւ հին վանքեր կան,
պէտք է մտածել, որ նոքա ունեցել են և պատ-
կերներ քանդակուած կամ նկարուած. նոյն
Տիրամօր նկարներով լի են և Հայոց զըշեայ
մատենները. ցանկալի է հրատարակել այդ-
պիսի քանդակների և նկարների մի ժողովա-
ծու, որպէս զի կարելի լինի նոցա ուսումնա-
սիրութեամբ զաղափար կազմել թէ ո՞րն է
այն առանձնութիւնը, որով ջոկուում էին
Հայոց պատկերներն ուրիշներին:

Կ. Կ.

(Շ ա Ր Ո Ն Ա Կ Ե Լ Ի).



Ա. Ղ. ՔԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ՔՐԻՍՏՈՆԵԱՒԹԵԱՆ ՅԱՂԹՈՒԹԻՒՆԻՅ ՅԵՏՈՅ. *

(Շ ա Ր Ո Ն Ա Կ Ե Լ Ի) **



Բ.

Աղքատների խնամատարութիւնը մինչև
Կոստանդին բացառապէս համայնական բնա-
ւորութիւն ունէր. բայց նորանից յետոյ եկող
ժամանակի մէջ ուրիշ կերպարանք է ստա-
նում: Այս շրջանի մէջ համայնական խնա-
մատարութիւնն հասնելով իւր զարգացման
բարձր կէտին՝ հեռզհետէ ընկնում է, և նո-
րա տեղ սկսում են ծաղկել հաստատութիւն-
ները: Որքան և ցանկալի էր աղքատների
խնամատարութիւնը համայնական կեանքի հետ
սերտ կապուած տեսնել, բայց և այնպէս
պատմական անհրաժեշտութիւն էր հաստա-

տութիւնների երևան գալը: Այս շրջանի մէջ
քրիստոնէական սիրոյ գործունէութիւնը, դո-
րա հետ և աղքատների խնամատարութիւնը
կեդրոնանում է հաստատութիւնների և վան-
քերի մէջ:

Այս փոփոխութեան պատճառներն էին
եպիսկոպոսական վիճակների ընդարձակուելը,
աղքատների բազմանալը և վանքերի յառաջ
գալը: Քրիստոնէութիւնը պետական կրօն
դառնալով՝ քրիստոնեաների թիւը օրէցօր
ասանեակ հազարներով էր աճում, որի ան-
միջական հետեանքն էր և եպիսկոպոսական
վիճակների ընդարձակուելը: Եպիսկոպոսը, որ
առաջ ամենաշատը 3—5 հազար էր հովուում,
այժմ պէտք է տասնեակ, մինչև իսկ հարիւր
հազարներ կառավարէր: Բնական է, որ նա
այլ ևս այնպիսի անհատական խնամք տանել
չէր կարող, ինչպէս առաջ տեսանք, մանա-
ւանդ, որ սկզբներում եպիսկոպոսական թե-
մերը աւելի մանր վիճակների բաժանելը ընդ-
հանուր սովորութիւն չէր. իսկ համայնական
խնամատարութեան բնորոշ գծերից մէկը ան-
հատական խնամքն էր: Միւս կողմից անընդ-
հատ պատերազմներն ու բարբարոսների ար-
շաւանքներն և հարկերի ծանրութիւնը ժո-
ղովուրդը վերին աստիճանի աղքատութեան
էր հասցրել: Այս ժամանակը հռովմէական
պետութեան նիւթական քայքայման շրջանն
է կազմում: Պետութիւնն անկարող լինելով
այնպիսի ընդարձակ աղքատութեան դէմ
մաքառել, եկեղեցին էր, որ իւր բոլոր կա-
րողութեամբ աշխատում էր մեղմացնել տի-
րող թշուառութիւնը, մինչև իսկ ցորենի բաշ-
խումը աղքատ ժողովրդին, որ հռովմէական
կայսրութեան հնաւանդ սովորութիւններից
մէկն էր, անցնում է եկեղեցու ձեռքը: * Հաս-
կանալի է, որ այսպիսի պայմանների մէջ եկե-
ղեցին այլևս անկարող էր իւր սովորութեան
համեմատ անհատական խնամք տանել աղքատ-
ներին, եկեղեցական վարչութիւնն այլ ևս ան-
կարող էր տասնեակ հազարաւորների անհա-
տական հանդամանքներն ուսումնասիրել, կշռել
և ըստ այնմ կարգադրութիւններ անել: Մին-

* Այս վերնագրի տակ կարելի էր ամփոփել
իսկապէս ամբողջ եկեղեցու պատմութիւնը՝ Կոս-
տանդինից սկսած մինչև մեր օրերը, բայց մեր նպա-
տակը չէ աղքատների խնամատարութեան պատմու-
թիւն գրել, այլ միայն մատնացոյց անել այն բնորոշ
գծերի վերայ, որ մեզ համար անհրաժեշտ է աղ-
քատների խնամատարութեան մասին որոշ գաղա-
փար կազմելու համար: Մենք կանգ կառնենք յատ-
կապէս հնագոյն եկեղեցու պատմութեան վերջին
կիսի վերայ, որ Հայաստանեայց եկեղեցու համար
առանձին նշանակութիւն ունի:

** Տես Արարատ համար Ե. և Զ.: